ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ԱՐՄԵՆ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Քոչարյան,

Ի պատասխան Ձեր 27.03.2024թ. հ. 60-2024 գրության՝ տեղեկացվում է.

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը (այսուհետ՝ Կազմակերպություն) կազմակերպությունը 2023թ.-ին սկսել է դենդրոֆլորիստիկ կազմի երիտասարդացման և վերաձևափոխման աշխատանքներ.

Երևան համայնքում իրականացնում է կենսունակության ավարտին մոտ գտնվող և կենսունակությունը կորցրած, այլևս ֆունկցիա չիրականացնող ծառերի փոխարինում առավել արժեքավոր և դեկորատիվ տաս և ավել տարեկան ծառատեսակներով: Աշխատանքներն իրականացվում են Երևան քաղաքի ավագանու 18.11.2009թ.-ի N 36-Ն որոշման 12-րդ կետի 2-րդ, որոշ դեպքերում 4-րդ և 5-րդ ենթակետերի, իսկ ծառերի հեռացման աշխատանքները համաձայն Երևանի քաղաքապետի 28.08.2023թ.-ի N 2846-Ա որոշման և դրա հավելվածների: Արժևորելով իրականացվող աշխատանքների գիտական նշանակությունը՝ Կազմակերպությունը 23.02.2023թ.-ին Երևանի քաղաքապետարանում նախաձեռնել և իրականացրել է իր տեսակով եզակի գիտական աշխատաժողով՝ «Երևան համայնքում կենսունակության ավարտին մոտ գտնվող և ամբողջովին դեֆորմացված ծառերի փոխարինում գեղազարդ և արժեքավոր ծառերով: Ինվազիվ ծառերի հեռացում»: Աշխատաժողովին հրավիրված են եղել գիտնականներ՝ գերատեսչությունների համապատասխան մասնագետներ:

Գործնական աշխատանքներն սկսվել են 23.02.2023թ.-ից: Այս աշխատանքների շրջանակում ընդունվել և հաստատվել են շուրջ երկու տասնյակ փողոցներ, որոնցում մեծամասամբ կենսունակության ավարտին մոտ, կենսունակությունը կորցրած, դեֆորմացված թեղիներ են, որոշ դեպքերում հացենիներ, բարդիներ և այլ ծառատեսակներ:

Հեռացված և տնկված ծառերի վերաբերյալ նշվում է, որ հեռացված ծառերի քանակը դեռևս ստույգ չէ, քանի որ կան նախատեսված հատվածներ, որտեղ աշխատանքներն ավարտված չեն: 2024թ. գարնանային վեգետատիվ ժամանակահատվածից մինչ այսօր մոտավոր հաշվարկներով հեռացվել է շուրջ 350 ծառ, տնկվել՝ 516-ը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ